



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ԱՊՐԻԼԻ 2020 թվականի N 08-Ա

**ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 08-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արջուտ համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 08-ի նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Արջուտ համայնքի ճանապարհների վերանորոգում տուֆ քարով» և «Արջուտ համայնքում ֆոտովոլտային կայանի տեղադրում» ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտերին համաձայնություն տալու մասին:
2. Արջուտ համայնքի բյուջեի 2020 թվականի առաջին եռամսյակի կատարողականի քննարկման մասին:
3. Արջուտ համայնքի հողամասերի վարձակալության և աճուրդ-վաճառքի մասին:

Կողմ - 4

Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՏԻԳ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՎԱԶԳԵՆ

ՎԱԼԼԱՔՅԱՆ

ԽՈՅԵՑՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՎԱՅՆ

ՄԿՐՏՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՍԱԹԵՆԻԿ

ՇԱՀԻՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՇԱՀԻՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 09-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ ՏՈՒՖ ՔԱՐՈՎ» ԵՎ «ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԵՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

- 1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Արջուտ համայնքի ճանապարհների նորոգում տուֆ քարով» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին:
- 2.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Արջուտ համայնքում ֆոտովոլտային կայանի տեղադրում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին:
- 3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրից:

Կողմ - 4

Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՏԻԳՐ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՎԱԶԳԵՆ

ՎԱԼԼԱՔՅԱՆ

ԽՈՅԵՅՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱՐԶ

ՄԿՐՏՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՄԱՐԶ

ՇԱՀԻՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԱՐԶ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 10-Ա

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ
ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով՝ Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

Ընդունել ի գիտություն Արջուտ համայնքի բյուջեի 2020 թվականի առաջին եռամսյակի կատարման հաղորդումը՝ առ 01.04.2020 թվական՝

1. Եկամուտների գծով՝ - 8331.7 հազար դրամ

այդ թվում՝ վարչական բյուջեի մասով - 8331.7 հազար դրամ

ֆոնդային բյուջեի մասով - ---- :

2. Ծախսերի գծով՝ - 5116.7 հազար դրամ

այդ թվում՝ վարչական բյուջեի մասով - 5116.7 հազար դրամ

ֆոնդային բյուջեի մասով - ----:

Կողմ 4

Դեմ 0

Ձեռնպահ 0

ՔԱՐԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ *ՏԻԳՐ*

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՎԱԶԳԵՆ *ՎԱԶԳԵՆ*

ԽՈՅԵՑՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ *ՀՈՎՀԱՆՆԵՍ*

ՄԿՐՏՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ *ՍԱԹԵՆԻԿ*

ՇԱՀԻՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ *ՇԱՀԻՅԱՆ*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ՂԵԿԱՎԱՐ*

ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՅԱՆ *ՎԱՐԴԱՆ*





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 11-Ա .

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել համայնքի ղեկավարի առաջարկած համայնքային սեփականություն հանդիսացող հողատեսքերի վարձակալության և աճուրդ-վաճառքի պայմանները՝ հետևյալ կերպ՝

Վարձակալություն՝

Լոտ 1 -06-019-0107-0379 ծածկագրից, 5,27886 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, մեկնարկային գինը՝ 10 000 դրամ:

Լոտ 2 - 06-019-0107-0381 ծածկագրից, 2,14681 հա արոտավայր, մեկնարկային գինը՝ 10 000 դրամ:

Աճուրդ-վաճառք՝

Լոտ 1- 06-019-0106-0036 ծածկագրից, 0,0865 հա բնակավայրերի այլ հողամաս, մեկնարկային գինը՝ 100 000 դրամ:

Լոտ 2-06-019-0047-0014ծածկագրից,0,7հա բնակավայրերի այլ հող, մեկնարկային գինը՝ 80 000 դրամ:

Մասնակցության վճարը՝ 1000 դրամ, նախավճարը և քայլերի չափը՝ մեկնարկային գնի 5%:

Կողմ -4

Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ *ՏԻԳ*

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՎԱՉԳԵՆ *[Signature]*

ԽՈՅԵՅՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ *[Signature]*

ՄԿՐՏՁՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ *[Signature]*

ՇԱԿԻՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ *[Signature]*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *[Signature]*

ՎԱՐՂԱՆ ՄԿՐՏՁՅԱՆ *[Signature]*

